

# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԱՄԱՌԱՅԻՆ ՉՈՐԱԿՈՉԻ ՄԵԿՆԱՐԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

11.06.2014

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը Աբովյանի և Նաիրիի զինվորական կոմիսարիատներում մասնակցել է ամառային զորակոչի մեկնարկի կապակցությամբ կազմակերպված հանդիսավոր միջոցառումներին:

Աբովյան քաղաքի զինկոմիսարիատում կազմակերպված տոնական միջոցառումը մեկնարկել է ՀՀ Չինված ուժերի հոգևոր առաջնորդ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի օրհնության խոսքով:

Այնուհետև զինակոչիկներին իր ողջույնի և շնորհավորանքի խոսքն է հղել Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը՝ ընդգծելով հայրենիքին անվերապահորեն ծառայելու բոլոր գերակայություններն ու հայոց բանակի շարքերը համալրող նորակոչիկների նվիրումն այդ կարևորագույն գործին:

Աբովյանի զինվորական կոմիսարիատում տեղի ունեցած հանդիսավոր միջոցառմանը մաս է կազմել նաև Կոտայքի մարզպետի նախաձեռնությամբ կազմակերպված համերգային ծրագիրը, որին մասնակցել են մարզի լավագույն համույթներն ու անհատ կատարողները:

Հանդիսության շրջանակներում ելույթ է ունեցել նաև Աբովյանի զինվորական կոմիսարը, իսկ միջոցառման ամփոփումը տեղի է ունեցել զինակոչիկներին հուշանվերների հանձնմամբ:

Այնուհետև Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն այցելել է Նաիրիի զինկոմիսարիատ, որտեղ ևս զորակոչի առաջին օրն ուղեկցվել է հանդիսավոր միջոցառմամբ:

Նաիրիի զինկոմիսարիատում կազմակերպված միջոցառումը մեկնարկել է Եղվարդի Սուրբ Աստվածածին Եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Հովնան քահանա Մաթևոսյանի օրհնության խոսքով:

Ջերմ շնորհավորանքներ հղելով բոլոր զինակոչիկներին, նրանց ծնողներին և ողջ հասարակությանը՝ իր խոսքում Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը զինակոչիկներին մաղթել է քաջություն, տոկունություն և հայրենիքի սահմաններն անսասան պահելու նվիրական առաքելությունը մեծագույն պատասխանատվությամբ կատարելու բարձր պատրաստակամություն:

Նաիրիի զինվորական կոմիսարիատում ամառային զորակոչի առաջին օրվա առթիվ կազմակերպված հանդիսավոր միջոցառումն ամփոփվել է «Չինվոր» համակարգող խորհրդի նախագահ Մարգարիտա Խաչատրյանի ու Նաիրիի զինվորական կոմիսարի պաշտոնակատարի ողջույնի և շնորհավորանքի խոսքերով, ինչպես նաև հուշանվերների հանձնման արարողությամբ: